


361

4-47

Երկր. Գրառ. Գրառարան  
 "Սոցիալական" Գրառ.  
 Զեյթ Գրառ. Գր.  
 Գրառ.

# ԿԻԼԻԿԻՈՅ

ՈՐԲԱԽՆԱՄ ԿԵԴՐ. ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ



## Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

1909 Օգոստոս 7 — 1910 Դեկտեմբեր 31



4. ՊՈԼԻՍ  
1911

361  
4-47

361  
4-47

1 MAR 2018

Կ. Պոլիս, 8/21 Մարտ 1911

ԿՆԻԿՆՈՅ  
ՈՐԲԱՆՆԱՄ ԿԵՂՐ. ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ  
Կ. ՊՈԼԻՍ

ԽԻԼ 974

Բարձրաշնորհ

Տ. Վահրամ Ս. Արեւ. Մանկունի

Տեղապահ Պատրիարքութեան Հայոց Թուրքիոյ  
եւ Նախագահ Ազգ. Կեղր. Վարչ. Պատկ. Քաղ. Ժողովոյ

ԱԶԳ. ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆ

Մտազան Հայր.

Ազգ. Կեղր. Վարչութեան Պատկ. Քաղ. Ժողովոյ նկատի  
առնելով Կիլիկիոյ աղէթին երեսնէն անխումբ մնացած բազ-  
մաթիւ հայ որբերը հոգալու անհրաժեշտ պէտքեր, 1909 Օգոս-  
տոսին կազմեց Որբախումբ Յանձնաժողովս, ուսումնասի-  
րելու համար նոյն որբերը պահպանելու միջոցները եւ ըս-  
տանք սահմանելու կարեւոր կարգադրութիւնները:

Յանձնաժողովս յօժարութեամբ ընդունած ըլլալով  
Պատկ. Ժողովոյ կողմէ առաջարկուած այս նուիրական  
պաշտօնը, կը կատարէ զայն իւրովսանն եւ այսօր կը գայ  
Պատկ. Ժողովոյ ներկայացնել. 1909 Օգոստոս 7—1910 Դեկտ. 31  
ի իր համարատարութիւնը:

Շնորհակալութիւն յայտնելով այս առթիւ, Յանձնաժո-  
ղովիս ընծայուած վստահութեան եւ աջակցութեանց համար,

Մնամք խորին յարգանքով.

Ի Դիանց Կիլ. Որբ. Կեղր. Յանձնաժողովոյ  
Ատենադպիր Ատենապետ  
ԱՍԻՐԻՍ ՍՈՒՐԵ Ա. Գ. ՇԻՍԻՆԵԱՆ

ՏՊԱՐԱՆ ԵՒ ԿԱԶՄԱՏՈՒՆ  
Օ. ԱՐՁՈՒՄԱՆ  
№ 94

957-93



Ու այն որ այս պատկերներէն մէկուն միայն գտած ըն պող ջուր կը խմին աշակերտի անունով, վարձքը պիտի չկորսնցնէ:

ՄԱՅԹ. Ժ. 42

# Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

## ԿԻԼԻԿԻՈՅ ՈՐԲ. ԿԵԴՐ. ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՅ

1909 ՕԳՈՍՏՈՍ 7 — 1910 ԴԵԿՏ. 31

### ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՒՄ ԵՒ ԻՐ ԳԻՒՄՆԻՆ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

Քաղ. Ժողովի կողմէ առաջին անգամ Յանձնաժողովիս անգամ նշա-  
նախուած էին, Տեարք

- Արշակ Շմաւոնեան
- Արաաչէս Հիւրմիւզ
- Գառնիկ Սարգիսօֆ
- Գէորգ Թորգոմեան
- Զարեհ Բէքմէզ
- Զարեայր ձյմարտախօսեան
- Լևոն Բանիկեան
- Հեթում Սէթեան
- Յակոբոս Ճէճիղեան (Բրօֆ.)
- Յակոբ Գորեան
- Յարութիւն Շահրիկեան
- Ներսէս Սհանեան և
- Վառաչապուհ Մանուկեան:

Սակայն, ատեն մը վերջ, վերոյիշեալներէն ոմանց հրաժարելով՝  
Յանձնաժողովիս առաջարկութեամբ և Քաղ. Ժողովի վաւերացմամբ նոր  
անդամներ պաշտօնի հրաւիրուեցան, որոնք էին, Տեարք

- Ալիքսան Թօփալեան
- Աստուածատուր Հարենց
- Գ. Շէրպէթեան
- Գառնիկ Հանէսեան
- Կարապետ Իրանտսեան
- Հէրպէրթ Ալէն
- Մ. Երազեան
- Յովակիմ Արիկեան և
- Յովհաննէս Գարտաշեան

որոնցմէ Գարտաշեան էֆէնտիին ատեն մը վերջ՝ իսկ հինգին ալ իսկոյն  
հրաժարմամբ, յանձնաժողովիս անգամ մնացին, Տեարք

- Ալիքսան Թօփալեան
- Արշակ Շմաւոնեան
- Լևոն Բանիկեան



հանն զայն, ձեռք առաւ անմիջապէս այն միջոցները որոնցմով կարելի պիտի ըլլար որոշող խնամարկութեան գործը ապահովել:

Որբախնամը տեսաւ որ իր զրամագրուելը կը կազմեն 1. — Ազգացնոց ազնիւ զգացումները և 2. — Կառավարութեան բարեացակամութիւնը: Տեսաւ մեծանոցն ատեն որ առանց իր կողմէ նպատահաւարման մասին ջանք ու հոգածութիւն ի գործ դրուելու և հետեւաբար քիչ շատ ապահովուելու՝ կրնային ապարդիւն մնալ Կիլիկիոյ իր ներկայացուցիչներուն ընելիք կարգադրութիւնները, ուստի միաձայնութեամբ որոշեց որ որբանոցներու կազմակերպութեան և մատակարարութեան դերը ստանձնելով հանդերձ, իրաւասութիւն ու պաշտօն ունենայ հասոյթի աղբիւրներ վնասուելու և նպաստ հաւաքելու: Եւ առ այս՝ արտօնութիւն ուզեց Ազգ. Կեդր. վարչութիւնէն որ բանաւոր և ընդունելի դատելով այս առաջարկը, արտօնեց Որբախնամը իր յարմար դատած եղանակաւ հասոյթի աղբիւրներ վնասուելու և նպաստ հաւաքելու:

Յանձնաժողովը այս արտօնութեան վրայ, ձեռնարկեց խնդին նպատահաւարման գծուարին գործին զոր արդիւնաւորելու համար հարկ տեսաւ Կիլիկիոյ ահաւոր աղէտին հանդէպ հայ ժողովուրդին պարտականութիւնը զգացնող կոչ մը հանել շրջակերութեան, ուղղուած ամբողջ Հայութեան:

Ահաւասիկ այդ կոչը, — պատրաստուած Բրօֆ. Յակոբոս էֆ. Ուէ-ճիզեանէ, — որմէ բաղմաթիւ օրինակներ զրկուեցան գրեթէ ամէն կողմ ուր Ազգը իր գաղութը ունէր:—

### Կ Ո Ջ Մ Ը

#### Ա Մ Բ Ո Ղ Ջ Հ Ա Յ Ո Ւ Թ Ե Ա Ն

#### Ա Յ Ա Ն Ա Յ Ի Ո Ր Բ Ա Յ Հ Ա Մ Ա Ր

Որբախնամ Յանձնախումբը, որ Ազգ. Կեդր. վարչութիւնէն պաշտօն ընդունած է խնամելու Կիլիկիոյ ահեղ աղէտին հետեւանքը եղող հազարաւոր որբերը, հարկադրուած է ամենասրտատուջ կոչ մը ուղղելու ամբողջ Հայութեան: Տակաւին թաց են աչքերնիս այն լեղի արցունքներով որոնք թափուեցան մեր հազարաւոր եղբայրներուն ու քույրերուն համար, որոնց արիւնալից ու խողխողուած մարմինները ահաւոր և կակծեցուցեց վայրի մը փոխեցին Կիլիկիոյ գեղեցիկ երկիրը. բայց մեր անհուն ցաւը պէտք է որ թմրեցնէ մեզ և մոռցնել տայ մեր պարտականութիւնը ասանկ անօրինակ տարաբաղդութեան մը մէջ. ու պէտք է որ վայրկեան մը իսկ կորսնցնենք Աչքերնուզ առջեւ բերենք այն հազարաւոր մատղաշ, փափուկ և անօգնական մանկիկները որոնց սրտակեղծ ձայները մինչեւ մեզի կը հասնին. անոնք ի գո՛ւր կը փնտռեն գուրգուրոտ մայրեր ու գորովալից հայրեր. Կիլիկիոյ ապառաժները տխուր արձագանգ մը միայն ունին իբր պատասխան այդ լալազին ձայներուն ու հառաչներուն: Անոնց հայրերը արիւնշաղախ դիակներ եղան. ու անոնց մայրերը, եթէ երբեք ողջ են, տխուր, վտիտ գիրկեր ունին միայն, հոն զանոնք ողողելու իրենց յուսահատ և տրտմաթափիծ արցունքներով: Ինչ աղէտաբշտ պատմութիւններ ունին այս պղտիկները: Անոնցմէ մէկը, իր մօր կարօտով այրած, ա՛լ չկրցաւ դիմանալ և գիշերով որբանոցի որմերէն դուրս նետուեցաւ, իր մայրը գտնելու և անոր գիրկը դառնալու համար: Կը համարձակի՞նք մեր երեսը մէկդի դարձնել թափառապա՞ծ որբերուն տխուր տեսարանէն: Անոնք մե-

րիններն են արդեամբ: Յորչափ Հայ ազգը կը մնայ, անոնք պէտք է որ լքուած և որբ մնան. մենք ենք անոնց հայրն ու մայրը: Անոնց ծնողքը մեր եղբայրներն ու քույրերն էին, հոն արիւնաթաթաւ Կիլիկիոյ մէջ ինկան իբր նահատակ ու մարտիրոս, ու իրենց ջախջախուած ձեռներով մեզի աւանդ տուին այս որբերը: Հայ ազգը պիտի չմերժէ այս սրբազան աւանդը, անոր հոգածութեամբ, անոր գորովոտ ձեռներուն ներքեւ այս մատղաշ Հայերը պիտի մեծնան, և թոյլ պիտի չտանք բնաւ որ անոնք անտուն, անհայր, անմայր թափառին Կիլիկիոյ այն գեղեցիկ ու արգաւանդ երկրին վրայ զոր իրենց հայրերն ու նախնիքը այնքան ծաղկեցուցին: Որբախնամ Յանձնախումբին վաւերական տեղեկութեանց համեմատ, հազարաւոր որբեր կան որոնք իրենց հայրը կորսնցուցած են, ու երեք չորս հազարի կը հասնի անոնց թիւը, որոնք ոչ իսկ այրի, ա՛ղքատ մայր մը ունին զիրենք հոգացող: Գոհութեամբ կը յիշենք որ մեր Սահմանադրական Օսմ. կառավարութիւնը գթութեամբ կը նայի անոնց ու կարելի եղած օգնութիւնը կ'ուզէ ընձեռել. սակայն նախապէս մեր պարտաւորութիւնն է զանոնք հոգալ: Այսօր այս ահաւոր, թշուառ խումբը ձեռքի կը դարձնէ իր ողորմուկ, արցունքոտ աչքերը, ո՛վ Հայեր, ձեռքի կը սպասէ այս անհուն աղէտին դարման մը: Ո՞ր Հայն է որ իր վերջին լուսնն պիտի չտայ յօժարակամ, գէթ մասամբ սփոփելու համար այս խեղճերուն վիշտը: Այս ամբողջ Հայ սերունդը մեզի կը յանձնուի այժմ նախախնամութենէն. ցոյց տանք աշխարհին թէ մենք ճշմարիտ ազգասէրներ ենք, ու չմոռցնելով մեր օգնութիւնը, մեծցնենք այս Հայ սերունդը, գուրգուրանք անոնց վրայ և անոնցմէ յառաջ բերենք Հայեր որոնք կրթուած, զարգացած ու բարձր զգացումներով վառուած անդամներ ըլլան մեր համայնքին, իբր հշմարիտ Հայ ու իբր ճշմարիտ Սամանցի: Այս կերպով տարբարող ինկածները պիտի վերակենդանանան, այս կերպով նոր ուժեղ տարր մը պիտի ընծայենք մեր գեղեցիկ երկրին ու անոր ապագային: Ոճիր է չգործածել այս մեծ պատեհութիւնը. ոճիր է մերժել սա տօ՛գոյն, ազգուն ու մատաղ ձեռները որոնք ահա մեզի կարկառուած են ողորմութիւն հայցելու, ինչպէս պիտի կրնանք հանգիստ քնանալ հոս մեր կակուղ բարձերուն վրայ, եթէ թողունք զանոնք հոն անպատասպար, չունենալով տեղ մը հանգչեցնելու իրենց մանկական, անմեղունակ գլուխը. մինչ մատալուտ ձմեռը կուգայ իր բոլոր խստութեամբը, ինչպէս պիտի կըրնանք վայելել հոս մեր ճոխ կամ աղքատիկ սեղանները, երբ գիտենք թէ հոն Ատանայի, Մերսինի, Հաճընի և ուրիշ վայրերու տխուր ամառներուն մէջ անօթի կը հիւծին այս փոքրիկ անմեղները, և կը տառապին անպատասպար Բանանք, ուրեմն, մեր քսակները, հարուստ, աղքատ ամէնքս ալ, գթալից օգնութեան ձեռք երկնցնենք անոնց, հիմա, առանց յապաղումի, մեր չքաւորութենէն իսկ հարստութիւն մը վազցնենք հոն այդ թշուառներուն գիրկը, ու Աստուած ինքը, որ որբին ու որբեւայրիին հայրն ու տէրն է, ինք իր օրհնութիւններով պիտի բեռնաւորէ, և իր վարձատրութեամբ պիտի հատուցանէ մեզ:

Ի Բացակայութեան Ա. Պատրիարք Զոր  
Պատրիարքական փոխանորդ  
ՂԵՒՈՒՄ Ծ. Վ. ԴՈՒՐԵԱՆ

Ի դիմաց Կիլիկիոյ Կեդր. Որբախնամ Յանձնախումբի եւ նորին որոշմամբ  
Գանձապետ Ասենադպիր Ասենայիս  
Ա. ԹՕՓԱԼԵԱՆ Ս. ՍՈՒԻՆ Ա. Գ. ՇՍԱԿՈՆԵԱՆ

Նպատահաւարման գործը ամենուրեք կանոնաւոր հիման մը վրայ դնելու նպատակով ալ՝ Որբախնամն որոշեց ինչպէս մայրաքաղաքիս այլև այլ թաղերու և գաւառներու, նոյնպէս արտասահմանի մէջ, վերջապէս ամէն տեղ ուր կարելիութիւն կար, կազմել Որբախնամ Մասնախումբեր, համաձայն հետեւեալ հրահանգին:—

### Հ Ր Ա Ն Ա Ն Գ

### Կ Ի Լ Ի Կ Ի Ո Յ Բ Ի Բ Ե Բ Ո Ւ Ն Հ Ա Մ Ա Բ

### Ն Պ Ա Ս Ս Ա Մ Ա Տ Ո Յ Յ Մ Ա Ս Ն Ա Ճ Ի Դ Ե Բ Ո Ւ Կ Ա Ջ Մ Ո Ւ Թ Ե Ա Ն

Ե Ի

### Ն Պ Ա Ս Ն Ե Բ Ո Ւ Հ Ա Ի Ա Ք Մ Ա Ն

#### Մ Ա Ս Ն Ա.

#### Ո Ր Բ Ա Խ Ե Ա Մ Մ Ա Ս Ն Ա Ճ Ի Դ Ե Բ Ո Ւ Կ Ա Ջ Մ Ո Ւ Թ Ի Ի Ե

- 1.—Կեդրոնական Յանձնաժողովը կը հաստատէ մասնաճիւղեր նպաստ հոււարելու համար:
- 2.—Կիլիկիոյ Որբախնամ Կեդրոնական Յանձնաժողովը Ելեւմտից ճիւղը արտօնուած է Պոլսոյ Թաղերուն մէջ ուղղակի իր նախաձեռնութեամբ, իսկ գաւառներու և արտասահմանի մէջ, ուղղակի կամ տեղւոյն ազգային մարմիններուն (Քաղաքական ժողով, Թաղական Խորհուրդ, Հոգաբարձութիւն, Առաջնորդ), միջոցաւ առանց դաւաճական խտրութեան ներկայացուած ընտրելիներէ մասնաճիւղեր կազմել: Անոնց կազմութիւնը կը տեղեկագրուի Կեդրոնական Յանձնաժողովին, որ կը հաստատէ, և յետոյ հրատարակութեան կուտայ:
- 3.—Նպաստահաւաք Մասնաճիւղերը առ նուազն երեք և առ առաւելն հինգ անձերէ կը բաղկանան, և կ'ունենան Ատենապետ, Ատենադպիր և Գանձապետ:
- 4.—Նպաստներու գանձման ձեւը մասնաճիւղերը կ'որոշեն տեղական պայմաններու համաձայն:
- 5.—Մասնաճիւղերը անպայման պարտաւոր են ամէն ամիս իրենց գանձումները դրկել Կեդրոնական Յանձնաժողովը Գանձապետին:
- 6.—Մասնաճիւղերը պարտին ուղարկել նաև,
  - Ա.—Նպաստներու և ելեւմտից հաշիւը,
  - Բ.—Պաշտպաններու յաւելեալ կամ փոփոխեալ ցուցակը:
- 7.—Կեդրոնական Որբախնամ Յանձնաժողովը Ելեւմտից ճիւղը ամէն ամիս մասնաճիւղերէն եկած հաշիւները հրատարակութեան կուտայ և հաշուեկէշուն ալ կը ներկայացնէ Կեդր. Յանձնաժողովին:
- 8.—Մասնաճիւղերու հաշիւները և գործառնութիւնները միշտ Կեդրոնական Յանձնաժողովը հակակշիւն ներքեւ կը գտնուին:

#### Մ Ա Ս Ն Բ.

- Նպաստներու համար ընդունուած է երկու տեսակ դրուութիւն,
- Ա.—Որբերու պաշտպանութիւն,
  - Բ.—Պարբերական նուիրատուութիւն:
- 9.—Որբախնամ Յանձնաժողովի Ելեւմտից ճիւղը կը դիմէ ամէն կարգի անձանց, անոնց կարողութեան համաձայն մէկ կամ աւելի որբերու պաշտպանութիւնը ստանձնել տալու համար:
  - 10.—Իւրաքանչիւր որբի տարեկան ծախք հաշուուած է 5 Օսմ. յիշաւ. պաշտպանները յանձնառու կ'ըլլան մէն մի որբի համար վճարել նոյն գումարը:
  - 11.—Ինչպէս անհատներ, նոյնպէս ո և է Մարմին կրնայ պաշտպան արձանագրուել ներկայ հրահանգին համաձայն:
  - 12.—Պաշտպաններու յատուկ մասնաւոր արձանագրութեան տեսակ մը կ'ըլլայ, ուր կ'արձանագրուին նաև որբերու անունը, մականունը և այլ մանրամասնութիւնները:
  - 13.—Վճարումները կ'ըլլան տարեկան, վեցամսեայ կամ եռամսեայ:

- 14.—Պարբերական նուիրատուութիւնը տեւական ըլլալու պայմանաւ բաժնեգինի մը ձեւով ալ կ'ըլլայ, շաբաթական կամ ամսական վճարումներով, որուն փոխարէն կանոնաւոր ստացագիր կը տրուի մասնաճիւղերուն կողմէ: Այդ ստացագիրները Կեդրոնական Յանձնաժողովը կողմէ կնքուած՝ իրեն յատուկ ընկալագիրներն են:
- 15.—Ասոնցմէ զատ կ'ընդունուին նաև միանուագ նուէրներ:  
(Կնիք Յանձնաժողովոյ)

Հոն ուր կը զրկուէր կոչերէն, կը զրկուէր նաև հրահանգներէն և առանձին նամակներով ալ կը խնդրուէր որ փութով կազմուին Մասնախումբերը:

Մինչ Յանձնաժողովս ի գործ կը դնէր այս միջոցները, միւս կողմէ Ազգային մամուլը իրեն բաժին ինկած պարտականութիւնը լիովին կը կատարէր, հրաւեր կարգալով հայ ժողովուրդին, օգնութեան իր վերականգնող ձեռքը կարկառելու աղէտահար որբերուն:

Եւ ահա հետզհետէ կ'սկսէին հասնիլ նպաստները ամէն զգացման տէր հայերէ, ո՛չ միայն մայրաքաղաքէս ու գաւառներէն, այլ և արտասահմանէն, ինչպէս կը տեսնուի տեղեկագրիս հաշուական բաժնին մէջ: Հոն պիտի տեսնուի նաև, որ մինչև անգամ... Քէմալի Մարէզ արկածաւոր ու թշուառ զուզին Հայն ալ իր այրիի յռանքն է բերն որբերու սնաուկին:

Մինչ այս, մինչ այն, կը կազմուէին մասնախումբերը, կը գործէին գնահատելի եւանդով, իբր կարևոր օժանդակները Կեդր. Յանձնաժողովիս, մէկ կողմէ ջանալով սպառել՝ կեդրոնէս զրկուած նուիրատուները և միւս կողմէ գանկելով ժողովուրդին մէջէն որբերու պաշտպաններ, մէկ կամ աւելի տարիներու յանձնառութեամբ:

Տեղեկագրիս մէջ կը դատուի լիակատար ցանկը այս Որբախնամ Մասնախումբերուն ինչպէս նաև ցանկը այն մարմիններուն որոնք թէև ոչ իբր մեր մասնաճիւղերը, սակայն և այնպէս իբր որբապաշտպան իրենց թանկագին աջակցութիւնը ընծայեցին Յանձնաժողովիս:

Ահա այս միջոցներով էր որ Որբախնամս կրցաւ իր պաշտօնավարութեան առաջին տարւոյն մէջ՝ մատակարարել իր որբանոցները հասցնելով անոնց պէտքերուն համապատասխան չափով դրամ: Պէտք է խոստովանիլ սակայն թէ՛ կրբեմն պատահեցաւ որ յապաղում կրէ դրամի առաքման գործը, որովհետև Մնտուկը դրամ չէր գտնուեր և Որբանոցները՝ մինչև դրամի գոյանալը՝ պարտաւորուած կ'ըլլային սպասելու, այդ միջոցին՝ փոխառութեամբ կամ պարտքով հողալով իրենց պէտքերը, այս պարագաներուն ընական է թէ, ի վրաս որբախնամ գործին:

Տեղեկագրիս այս դրուիք փոսկելէ առաջ, կարևոր կը համարինք յայտնել թէ Որբախնամ Յանձնաժողովս շնորհիւ Ազգին առատաձեռնութեան, մինչև իր հաշուեկէշուն թուականը, իր միջոցաւ, կրցաւ ձեռք բերել՝ 5748. 32 1/2 Օսմ. ոսկոյ գումար մը, — գոյացած մասնախումբերու ձեռամբ վաճառուած նուիրատուներէ, որբապաշտպանութենէ և պարզ նուիրատուութիւններէ, — ապահովելով նաև 2625 Օսմ. ոսկոյ գումար մը, յառաջիկային համար, յանձնառութիւն յայտնող որբապաշտպաններէ:

## ՈՐԲԱԽՆԱՄԻՍ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՓՈՒԹԱՅՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԻՐ՝ ՆՊԱՍՏԱՀԱՒԱԲՄԱՆ ԳՈՐԾԻՆ ԶԵՌՆԱՐԿԵԼԷՆ ԱՌԱՋ

Որբախնամիս ձեռք առած վերոյիշեալ միջոցները ժամանակի ընթացքին մէջ կ'արդիւնաւորուէին սակայն, մինչդեռ Յանձնաժողովս իր կազմութեան առաջին օրերուն մէջ պէտք ունէր բաւականաչափ դրամի, բացուած որբանոցներուն վարձքերուն, անոնց ներքին կազմաձեւերուն, անկողիններուն և ուրիշ նախնական անհրաժեշտ պատրաստութեանց, ինչպէս նաև անուսղի և հազուադասակապութի համար:

Ահա՛ այս ձգնաժամներուն մէջ էր որ Ազգ. Կեդր. Վարչութեան անօրինութեամբ՝ Որբախնամիս օգնութեան հասան յաջորդաբար 1. Ազգ. Պատրիարքարանի նպաստից Յանձնաժողովը, 2. Միջազգային նպաստամատոց Յանձնաժողովը, Կիլիկիան օրբերու պաշտպանութեան մարդասիրական ղեղեցիկ գործին մէջ առաջին փրկարար դերը կատարելով, 3. Մայրաքաղաքիս Հայ Վաճառականաց ակումբը՝ կանխապէս երեք հարիւր (300) լիրա վճարելով, ի հաշիւ Կիլիկիոյ մէջ իր անունով կառուցուելիք Որբանոցի մը շինութեան համար Յանձնաժողովիս արամադրած 1000 ոսկին և 4. Հայ-Հռովմէականաց Ազգատասիրաց Ընկերութիւնը իր պարահանդէսի հասոյթէն երկու հարիւր (200) լիրա բաժին հանելով օրբերուն:

Ազգային նպաստից Յանձնաժողովին տուածն էր Լիր. օսմ. 2022, իսկ Միջազգային նպաստիցնը՝ 400 լիր. օսմ. ինչպէս կ'երեւայ հաշուեկէշին մէջ:


### ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՍ ՄԱՏԱԿԱՐԱՐԱԾ ՈՐԲԱՆՈՅՆԵՐԸ

Ա.ՏԱՆԱ.—	Մանչ	146	Ազջիկ	87,	Գումար	233	Բացում	1909	Օգոստ. 1—15
ՀԱՃԸՆ.—	»	192	»	158,	»	350	»	1909	Սեպտ. 15
ՄԱՐԱՇ.—	»	105	»	73,	»	178	»	1909	Սեպտ. 1
ԱՅՆԹԱՊ.—	»	102	»	83,	»	185	»	1909	Հոկտ. 1
ՏԷՕՐԹԵՕԼ.—	»	152	»	121,	»	273	»	1909	Նոյմ. 15
ՀԱՍԱՆՊԷՅԼԻ.—	»	120	»	87,	»	207	»	1909	Հոկտ. 10
	Մանչ	817	Ազջիկ	609	գմր.	1426			

### ՄԵՐԱՆԻ ՈՐԲԱՆՈՅԸ

Կիլիկիան աղէտէն յետոյ ցարդ ունեցած ենք եօթը որբանոցներ Մերսին, Ատանա, Հաճըն, Մարաշ, Ա.նիթապ, Տէօրթեօլ և Հասանպէյլի:

Մերսինի որբանոցը վերոգրեալ ցանկին մէջ չդրինք, որովհետեւ այսօր գոյութիւն չունի: Այդ որբանոցը բացուեցաւ Կիլիկիոյ ղեպքերէն ան-



ԱՏԱՆԱՅԻ ՈՐԲԱՆՈՅԸ

միջապէս յետոյ ջանիւք Վարչական պատուիրակ Գեր. Տ. Գէորգ Ծ. Վրդ. Ապանեանի և Սարգիս Սուին էֆէնտի որոնք արկածեալ վայրերէն Մերսին դիմող որբերը խնամելու անմիջական հարկին ներքեւ գրանուելով, պատասպարեցին զանոնք տեղւոյն ազգ. վարժարանին մէջ և խալոյն հոգացին անոնց ապրուստի միջոցները :



ԱՏԱՆԱՅԻ ԱՐԱՋԻՆ ՊԱՏՈՒԻՐԱԿԱՆԵՐԸ  
ԳԵՈՐԳ Ծ. ՎՐԴ. ԱՍԼԱՆԵԱՆ ԵՒ ՍԱՐԳԻՍ ՍՈՒԻՆ

Սոյն որբանոցը իր առաջին ամիսներուն մէջ ունեցաւ 410ի չափ երկսեռ որբեր և 23ի չափ երկսեռ պաշտօնեաներ որոնք կը վարէին որբանոցը Գառնիկ էֆ. Դաւթեանի անօրէնութեան և Տիկին Զապէլ Եսայեանի հրակողութեան տակ :

Յանձնաժողովս նկատելով որ Մերսինի որբերը ամէնքն ալ այլ և այլ տեղերէ հոն դիմած են և թէ քաղաքին կլիման նպաստաւոր չէ անոնց առողջութեանը, որոշեց վերցնել որբանոցը հոնկէ : Այս որոշումը գործադրուեցաւ 1910 Ապրիլին Յանձնաժողովիս և Վարչական պատուիրակ Սարգիս Սուին էֆէնտի և որբանոցաց ընդհ. քննիչ Գուրգիան էֆ. ի ձեռամբ :

Մերսինի որբանոցին գոցուելովը՝ տեղւոյն խնամակալութեան և խնամակալուն հետ ժողովները իրենց հաշիւները տուին պատուիրակութեան : Խնամակալութեան և խնամակալուն հետ մատուցած ծառայութիւնը գոհացուցիչ և չնորհակալութեան արժանի եղած է :

Այս խնամակալութիւնը կը կազմէին Տեարք

- Կիւլասպի Կիւլպէնկեան
- Մարտիրոս Մոստիչեան
- Մինրան Գըրճճեան
- Մինրան Քէհեան
- Յակոբ Մանուէլեան
- Նշան Եալընըղեան
- Պետրոս Ռւրֆայեան
- Սարգիս Ղուկասեան :
- Վալանթէն Էնքսէրճեան

Մերսինի որբանոցին համար նախապէս հարկ դատուած էր չէնք մը շինելու ձեռնարկը, որուն համար Յանձնաժողովիս կողմէ արուեցաւ ընդամէնը (Ա. պատուիրակութենէն ցվերջ) 240 ոսկի, որմէ 40ը հաշուուեցաւ որբերուն պատճառաւ դարոցին այլ և այլ նորոգութեանց փոխարէն և 200ը յանուն որբանոցի ազգապատկան գեանին վրայ շինուած չէնքին ծախքերուն : Սոյն 200 ոսկին տեղւոյն Թաղ. Խորհուրդը մուրհակաւ պարտական մնաց չինգ տարիէն վճարելու Որբանոցի Յանձնաժողովիս : Այս կարգադրութեամբ չէնքը թողուեցաւ տեղւոյն Եկեղեցին իր կառուած :

### Ա Տ Ա Ն Ա Յ Ի Ո Ր Բ Ա Ն Ո Յ

Ատանայի որբանոցին բացման ևս ձեռնարկուեցաւ Տիկին Զապէլ Եսայեանի կողմէ, 1909 Օգոստոս 1—15, ի սկզբան 100ի չափ երկսեռ որբերով, որոնց թիւը հետզհետէ աւելցաւ :

Մերսինի որբանոցին փակումովը տեղւոյն որբերը մանրակրկիտ քննուեցան ընտրուելով ոմանք իրենց մայրերուն զրկուեցան, իսկ բոլորովին անտէրունջները փոխադրուեցան Ատանա և այն տեղի որբերն ալ քննուելով ոմանք վերադարձուեցան իրենց մայրերուն : Եւ որովհետեւ բոլորովին խնամքի կարօտ 233 որբերը տեղաւորելու չէնք գտնել անհնար էր, 100ը յանձնուեցան իրենց մայրերուն օրական 1<sup>1</sup>/<sub>4</sub> դահեկան ուտեստի դրամ, հագուստ և անկողին ընդունելով Որբանոցէն, իսկ մնացեալները զորս տեղ մը յանձնել կարելի չէր, պատասպարուեցան որբանոցին մէջ :

Մերսինի և Ատանայի որբանոցներուն մէջ պատասպարեալ որբերուն իրրեւ հացաղին Ատանայի կառավարութիւնը անձ գլուխ օրական 50 փարան վճարած է : Կառավարութեան կողմէ վճարուած է ցարդ նաև Ատանայի որբանոցին չէնքին վարձքը, — տարեկան 35 ոսկի :

Ասանայի Որբանոցին խնամակալութիւնը կը կազմեն, Տեարք  
 Աւետիս Կիւլպէնկեան  
 Միհրան Քէշիկեան  
 Թադէոս Թահմազեան  
 Յարութիւն Պէտէլեան  
 Գառնիկ Չատրըճեան

Որբանոցը ունի 12 պաշտօնեայ երկսեռ, 1 բժիշկ: Որբերը կը յաճախեն Ասանայի ազգային վարժարանը, իսկ որբուհիները Ազգանուէր Հայունեայ Ընկերութեան վարժարանը: Որբուհիներէն մաս մըն ալ կը յաճախէ ազգ. վարժարանը:

Հ Ա Ճ Ն Ո Յ Ո Ր Բ Ա Ն Ո Յ

Հաճնոյ Որբերը ցարդ տեղաւորուած էին քաղաքին լաւագոյն երկու շէնքերուն մէջ: Բայց որովհետեւ առողջապահական և այլ տեսակէտներով լաւագոյն էր որբերը բնակեցնել քաղաքին հանդիպակաց և իբր կէս ժամ հետի, բայց ջուրով և օդով և անտեսապէս աւելի նպաստաւոր վանքին մէջ, Որբախնամն յարմար դատեց հան փոխադրել որբերը:

Տեղւոյն բարեջան Առաջնորդ Գեր. Տ. Ներսես Վրդ. Դանիէլեան, որ Որբանոցին վերին հսկողութիւնը ստանձնած էր անձնուիրաբար և մատակարարութիւնն ալ կը հոգար իբր ներկայացուցիչը Կեղր. Յանձնաժողովիս, մեծապէս սատարեց Հաճնոյ որբախնամ գործին, որու աւթիքազցր պարտականութիւնն մը կը համարինք մեզ՝ հրապարակաւ շնորհակալութիւն յայտնել:

Որբանոցը ունի 16 պաշտօնեայ երկսեռ, բժիշկ մը: Կրթական հոգը ստանձնած են Միացեայ և Ազգանուէր Ընկերութիւնները:

Խնամակալութիւնը կը կազմեն

Գեր. Տ. Ներսէս Վրդ. Դանիէլեան, Նախագահ և Տեարք  
 Գալուստ Շրխրարմեան  
 Գէորգ Տ. Կիրակոսեան  
 Մանուկ Գալայճեան  
 Գրիգոր Էօրէնճեան  
 Յակոբ Գըրքեաշարեան  
 Յակոբ Մանկրրեան

Մ Ա Ր Ա Շ Ի Ո Ր Բ Ա Ն Ո Յ

Յանձնաժողովս իմանալով որ Մարաշի և Այնթապի կողմերն ալ բազմաթիւ որբեր անխնամ մնացած են, հեռագրաւ և նամակով հրահանգ տուաւ նոյն քաղաքի Առաջնորդարաններուն որ իսկոյն յարմարագոյն շէնքեր վարձելով պատասպարեն անաէրունջ որբերը:



ԱՏԱՆԱՅԻ ՈՐԲԱՆՈՑԻՆ ՄԷՋ ՏՂՈՅ ԲՈՎՆԵՐԷ ԱՌԱՋ ՕՐԸ

957-93

Մարաշի Առաջնորդ Վեհապետան Սրբազան փութացած էր խելոյն երկու շէնք վարձել և պատրաստել տալ որբերուն պէտք եղած անկողին, հագուստ և պաշար: Այս միջոցին հոն հասաւ Գուռզեան էֆէնտի որ անձամբ կատարելով քննութիւնը և որբերու ընտրութիւնը և կարգելով պէտք եղած պաշտօնեաները, բացաւ որբանոցը նախագահութեամբ տեղւոյն Կառավարիչին որ գոհութեամբ ընդունելով իրեն ընծայուած պատիւը իր օժանդակութիւնը խոստացաւ որբանոցին:

Մարաշու մեր երկսեւ որբերն ալ բաղդը ունեցած են վայելելու Վեհապետան Սրբազանի անմիջական հոգածութիւնը, որմէ դժբաղդարար գրկուեցան Ն. Սրբազնութեան մահուամբ:

Որբանոցը ունի 16 պաշտօնեայ երկսեւ, մէկ բժիշկ: Կրթական հոգր ստանձնած են Միայեայ և Աղգանուէր ընկերութիւնները:

Խնամակալութիւնը կը կազմեն Տ. Սահակ քհնյ. Տէր-Պետրոսեան (Առաջն. Փոխանորդ), Նախագահ և Տեարք

- Գէորգ Տ. Մեսրոպեան
- Կիրակոս Զօրպանեան
- Մողմոն Ոսկերիչեան
- Միհրան Վարժապետեան
- Յովհաննէս Հայթաեան
- Նշան Եէտիպանեան
- Մարգար Մատթէճեան

ԱՅՆԹԱՊԻ ՈՐԲԱՆՈՑ

Այնթապի Քաղաք. Ժողովը ալ Որբանոցումէն ընդունած հրահանգին վրայ խելոյն Խնամակալութիւն մը կազմեց հետեւեալներէն, Տեարք

- Արմենակ Նարէթեան
- Կարապետ պէյ Նազարէթեան
- Հրանդ Սիլահեան
- Միհրան Բիւզանդեան
- Յակոբ Գարամանուկեան
- Յովսէփ Առաքելեան
- Ռուբէն Սիլահեան

և Առաջն. փոխանորդ Տ. Յարութիւն քահանան գրկուեցաւ Անտիոք և շրջակայ արկածեայ վայրերը ուր գտնուած որբերը հաւաքելով բերաւ Այնթապ:

Որբանոցը ունի 10 պաշտօնեայ երկսեւ, մէկ բժիշկ:

Տէ՛ՕՐԹԵՕԼԻ ՈՐԲԱՆՈՑ

Տէօրթեօլի մէջ որբանոց բանալու համար դժուարութեանց բաղխած է յանձնաժողովս, մանաւանդ շէնքի չգոյութեան պատճառաւ, մինչեւ որ յաջողուած է ձեռք բերել եկեղեցիին քովը, լաւագոյն տուն մը, վազուէն ջուրի եզերքի: Սոյն որբանոցին տնօրինութիւնը ի սկզբան յանձնուեցաւ տեղւոյն քահանաներէն Տ. Խորէն Հօր, իսկ վերջերս երբ այլ ևս որոշուեցաւ Տ. Փառէն Ծ. Վրդ. ը մնայուն կերպով հոն թողուլ հսկելու տեղւոյն և Հասան Պէյլի որբանոցներուն վրայ, Տ. Խորէն ազատ թողուեցաւ իր պաշտօնէն: Որբանոցին բացումը կատարուած է տեղւոյն կառավարական պաշտօնէից և ժողովուրդին ներկայութեանը ու այդ առթիւ 100 ոսկիի մօտ գումար մը հանգանակուած է ի նպաստ որբանոցին:

Որբանոցը ունի բայ ի Տ. Փառէն Ծ. Վրդ. է որ ղնահասակի պաշտօնակարութիւն մը ունի իրրեւ տեսուչ, 12 երկսեւ պաշտօնեայ, մէկ բժիշկ:

Խնամակալութիւնը կը կազմեն, Տեարք

- Աւետիս Քէչիչեան
- Իսկէնտէր Քէօրօղլուեան
- Կարապետ Պարսամեան
- Միքայէլ Շազըլեան
- Պետրոս Գարաւաղուպեան
- Պետրոս Քէօրօղլուեան
- Ստեփան Ռուբէնեան

ՀԱՍԱՆՊԵՅՈՒԻ ՈՐԲԱՆՈՑ

Քննութեան ենթարկելով Պաղչէ գաւառակի արկածեայ վայրերը, անհրաժեշտ համարուեցաւ Որբանոց մը բանալ Հասանպէյլի մէջ որ 400 տուն հայաքնակ գիւղ մըն է և կեղրոն արկածեայ դաշտի մը: Բայց որովհետեւ ամբողջ գիւղը այրած էր և շէնք մը իսկ չկար, զիմում եղաւ երկու թուրքերաւ որոնք իրենց տուները վարձու առին յանուն որբանոցի:

Հասանպէյլիցիք որոնք բարոյական աջակցութիւններ ընծայած են յանձնաժողովիս, չունին իրենց գիւղին մէջ քահանայ կամ առաջն. տեղապահ մը, որով Որբանոցը կը խնամուի Տէօրթեօլի Որբանոցի տեսուչ Փառէն վրդ. ի վերին հսկողութեան տակ որ պարբերաբար կ'այցելէ, և տեղական պաշտօնեաներու ձեռամբ, (թուով 12): Խնամակալութիւն մ'ալ կազմուած է հետեւեալներէն, Տեարք

- Ասատուր Մահտեսեան
- Յարութիւն Քէչիչեան
- Նշան »
- Պետրոս »
- Պօղոս Պօյաճեան

## Ը Ն Դ Հ Ա Ն Ո Ւ Ր Ա Կ Ն Ա Ր Կ Ն Ե Ր ՈՐԲԱՆՈՑՆԵՐՈՒ ՎՐԱՅ

### ՇԷՆՔԵՐԸ

Որբանոցներու շէնքերը Հաճըն ու Մարաշ ամենալաւ տուներ են զորս երբեք կարելի էր գտնել վարձու համար: Առաջինը քառալայրիկ և վերջինը երկլայրիկ:

Տէօրթեօլի մեր որբանոցը իր ձեւովն ու զիրքովը յարմարագոյն շէնքն է:

Հասանալէյլի մեր երկու որբանոցներու շէնքերը երկլայրիկ են, բայց ոչ շատ ճաշակաւոր, ինչպէս միւս որբանոցները: Սակայն այս շէնքերը գիւղէն դուրս բացօթեայ գտնուելով՝ շատ նպաստաւոր եղած են տղայոց առողջութեան:

Այնթապի և Ստանայի շէնքերը իրենց ընդարձակ բակերովը միակ տուներն են յարմար որբանոցի: Իսկ ընդհանուր կերպով բոլոր որբանոցները նեղ կուգան պատասպարելոց, այնպէս որ հարկադրուած ենք մանչերն ու աղջիկները միեւնոյն շէնքին տարրեր սենեակներուն մէջ տեղաւորել, ի բաց առեալ Մարաշ և Հասանալէյլի ուր զատ զատ շէնքեր վարձած ենք երկու սեուերու համար:

Այս նոյն պատճառաւ Հաճըն և Հասանալէյլի միեւնոյն տեղը գործածեր ենք թէ՛ ճաշարանի և թէ՛ ննջարանի համար: Իսկ Այնթապ, Տէօրթեօլ, Մարաշ և Ստանայ ճաշարանը զատ է:

Հասանալէյլի տղաքը ծաղկապատիկ նստած կը ճաշեն կտաւի մը վրայ: Իսկ միւս տեղերը կանոնաւոր սեղան և նստարան ունինք:

Տեղւոյն անձկութեան պատճառաւ մահճակալ չունինք և տղայք կը պառկին խիտ, երբեմն երկու փոքրեր մէկ անկողնի մէջ: Այս կերպը ինքնին հաճելի չէ թէև, բայց զաւտներու մէջ տան մը փոքրեր առ հասարակ մէկ շարքով կը պառկին խոշոր վերմակի մը ներքեւ:

### ԿՐԹԱԿԱՆ


Թէև անխնամ որբերը պատասպարելու անմիջական պէտքը կը հարկադրէր մեզի առաջնութիւն սալ անոնց նիւթական հոգածութեան, այսու ամենայնիւ հնար եղածին չափ մեր տղայոց կրթութեան միջոցներն եւս մտածել ջանացինք տեղւոյն համեմատ տարրեր եղանակներ ի գործ դնելով:

Այնթապ բոլոր տղայք և աղջիկները կանոնաւորապէս յաճախեցին աղբային վարժարանները: Իսկ շատ փոքրերը որբանոցին մէջ դաս կ'առնէին երկու վարժուհիներէ որոնք մայրական հոգածութիւն ալ կը տածէին անոնց հանդէպ:

Ստանայի աղջիկները կը յաճախեն Ազգանուէր Հայուհեաց վարժա-



ԱՍԿՆԱՅԻ ՈՐԲԱՆՈՑԻ ԲԻՅՈՎ, ՏՕԲԹ. ՊԵՏՐՈՍԵԱՆ, ՈՐԲԻ ՍԸ ՔՆՆՈՒԹԵԱՆ ԱՏԵՆ



ՀԱՃԸՆԻ ՆՍԻՆԻՆ ՈՐԲԱՆՈՑԸ

րանը: Փոքրերու համար հող կը ասանին երկու վարժուհիներ: Իսկ Տ. Խոյ, Հ. Պէյլի, Մարաշ և Հաճըն բոլոր տղայք կը կարգային որբանոցներու մէջ: Հաճնոյ մեծ որբերը կը կարգային սեզւոյն Միացեալ ընկ. եան վարժարանը:

Հայոց Միացեալ ընկերութիւնը հայթայթեց մեր բոլոր որբերու դասագիրքերը: Ազգանուէր Հայունեաց ընկերութիւնը վճարեց Տէօրթեօլի երեք վարժուհիներուն և Հասանպէյլի մէկ վարժուհիին ամսաթոշակները, նոյնպէս ուսուցչուհի մը զրկեց Մարաշ և հայթայթեց մեր բոլոր որբանոցներու մէջ պէտք եղած ձեռագործներու նիւթերը:

Հայունեաց ընկերութիւնը յառաջիկայ շրջանին համար ստանձնած է մեր բոլոր որբանոցներու այջկանց բաժնին կրթական հոգը, այս նպատակաւ որբանոցներով Որբանոցամիջնա տարեկան 150 սակի:

**ՄՆՈՒՆԳ**

Իւրաքանչիւր որբանոցներուն կերակուրներն յարմարցուած են տեղական պայմաններուն: Ընդհանրապէս նկատի կ'առնուի տղայոց ճաշակը և ախորժակը: Զանք եղած է կարօտ չթողուլ որբերը իրենց կերակուրներուն և սալ անոնց պէտք եղած մտանդը, առաւել քան զոր կը վայելին իրենց տուններուն մէջ: Այսպիսեաւ զգարապէս անուժ ունեցած են որբերը և դէմքով փայլուն ու զուարթ, բոլորովին հակապատկերն իրենց նոր եկած վիճակին, ինչպէս նաև այժմ մեր որբանոցներէն դուրս անխնամ կեցած որբերուն:

Հայը որ գլխաւոր մտանդը կը կազմէ, Այնթապէ և Ատանայէ ի դատ կը պատրաստուի ուղղակի որբանոցներու համար: Տէօրթեօլ մեզի յատուկ շինուած փուռ մը ունինք: Հաճըն, Մարաշ և Հասանպէյլ փուռեր վարժուած են: Իսկ Ատանա և Այնթապ չուկայէն պատրաստ հայ կը գնուի այժմ:

**ԽՆԱՄԻ ԵՒ ՀՈԳԱՆՈՒԹԻՒՆ**

Մեր պատասպարեաններուն որբութիւնը մտցնելու և անոնց սիրելի ընտանեկան վիճակ մը ստեղծելու համար, ջանացած ենք որբանոցներուն տալ ամէնէն աւելի տան մը հանգամանքը, որով որբերը կ'ըսեն «Մեր տունը» ոչ թէ «Որբանոցը»: Որբանոցներու երկսեռ պաշտօնեաները սեզւոյն մէջ գտնուած ամէնէն բարեհամբաւ, դաստիարակուած ու խղճամիտ մարդիկն են, որոնք հօր և մօր գուրգուրանքով կը խնամեն որբերը:

**ՈՐԲԵՐԸ ԵՒ ՈՐԲԱՆՈՑՆԵՐԸ**

Որբերէն շատերը ուրախութեամբ և ցատկոտերով եկան իրենց նոր տունը: Իսկ աւելի փոքրերը չէին գատուեր իրենց մայրերէն: Բայց ընդունուելէն միայն քանի մը օր վերջը այնքան ընտելացած ու զո՞ մնացած են որ չեն ուզած բաժնուիլ որբանոցէն: Եղած են մայրեր որոնք իրենց տղաքը պահել չկրնարով հանգերձ չէին կրնար յանձնել զանոնք որբանոցին: Սակայն վերջը տեսնելով անոնց զուարթութիւնը, հագուած և կուշա վիճակը, շատ մխիթարուած են:

Ատանայի մէջ կոյր մայր մը դիմեց իր ութամեայ դուստրը որբանոց տալու. ընդունուած պարագային զղջաց. չէր կրնար զատուիլ սղէն: Տեսչութիւնը գիտնալով թէ տղան իր կոյր մայրը մուրացկանութեան առաջնորդելով, մուրացկան մը Կիտի ըլլայ վերջապէս, համոզեց մայրը և սիրաշահեց տղան: Այժմ որբը սրտանց կապուած է որբանոցին և մայրը նպաստով ապրելով ուրախ է տղուն վիճակին վրայ:

Որբանոցի վրայ որբերուն սէրը տեսնուեցաւ նաև անոնցմէ ոմանք իրենց մայրերուն յանձնելու գործողութեան ատեն: Մայրն ու տղան միանգամայն կուլային: Խեղճ այրին կ'երեւակայէր անհայր տղուն վտանգները որբանոցէն դուրս, իսկ որբուկը չէր կրնար բաժնուիլ իր վայելած երջանկութենէն:

**ԱՌՈՂՋՈՒԹԻՒՆ**

Որբերը նոր հաւաքուած ատեն, առ հասարակ դեղնած էին ու վատուծ: Մինչդեռ այժմ կայտառ ու կարմրուկ, զուարթ ու խաղաւէր:

Տարուան ընթացքին մէջ մեր որբերն ալ ենթարկուեցան տեղական հիւանդութեանց, ինչպէս Չերմ, փորհարութիւն, աչացաւ, մորթային եւք: Սակայն չորհիւ ձեռք առնուած միջոցներուն լուծով անցան: Հաճընէ և Ատանայէ զատ քրոնիկ ախտաւորներ չունինք: Այս տեղեր, որբերուն մէջ չորս—հինգ հատ գաղիական ախտէ բռնուածներ տեսնուեցան, զորս իսկոյն կղզիացնելով մայր ունեցողները մայրերուն յանձնուած են, պէտք եղած նպաստով ու դարմանով:

Ամբան սկիզբը, Ատանայի որբերուն 70ը աչքի ցաւ, մորթի եւք ևն ունէին: Այնթապի մէջ 60 տկար որբեր կային, որոնցք ամէնքն ալ այժմ աղէկցան: Պատահական հիւանդութիւններ կը տեսնուին ու կ'անցնին: Նոյն որբանոցին մէջ եօթը որբուհիներ կը մարէին, սաստիկ գլխացաւով մը, յանկարծ զգեսնուելով ու կը սանջուէին: Ասոնք իրենց մայրերուն զրկուեցան ու կը դարմանուին որբանոցին ծախքով:

Առողջութեան կողմէ առաջին տեղը կը գրաւեն Հասանպէյլի որբերը. յետոյ Տէօրթեօլիները:

Այնթապ, Տ. եօլ և Ատանա ամսականաւոր բժիշկ ունեցած ենք: Հասանպէյլի տղաքը ճրիաբար դարմանած է Տօքթ. Հապիպ: Մարաշի տղաքը ճրի նայած է Տօքթ. Յարութիւն Տէր Ղազարեան, իսկ Հաճընի որբերը Տօքթ. Քիւլիէիւան:

Ցարդ պատահած են տասը մահեր, 4ը Հաճըն, 3ը Այնթապ և 2ը Ատանա: Որբ մըն ալ արանձիսիքի գործողութեան ենթարկուած, բայց ազատուած է:

**ԿՐՕՆԱԿԱՆ**

Ի բաց առեալ Հասանպէյլի ուր եկեղեցի և քահանայ չկայ, մնացեալ բոլոր որբանոցներու պատասպարեալները լիովին կը վայելեն հոգեւոր մխիթարութիւն: Ամէն իրիկուն միասնական աղօթքով կը քնանան: Կիրակի օրերը, առտու իրիկուն, եկեղեցի կը յաճախեն, և Մտունդին ու Զատկին Հաղորդութիւն կ'առնեն:

**ՏԵՂԱՑԻՔ ԵՒ ՈՐԱՆՈՑՆԵՐԸ**

Որբանոց գտնուած տեղերու Հայերը առ հասարակ ջերմ վերաբերում ունեցած են հանդէպ որբերուն և այլ և այլ առիթներով նուէրներ կը զրկեն, օրինակ ոչխար, հաւ, միս, փայտ, հագուստ և մերթ դրամ:

Այս տեսակէտով ամէնէն առատածեռն կը հանդիսանան Տէօրթեօլցիք, որոնք որբանոցի բացման առիթով մէկանց (100) հարիւր ոսկիի մօտ դրամ յաջողեցան հանգանակիլ և այլ և այլ առիթներով անհատապէս կը մասնակցին որբանոցին ընծայարեութեան:

Մերսինցիք և Հաճընցիք ալ ոչ նուազ աջակից եղան որբանոցին:

Այնթապցիք տօնական օրերուն որբերը հրաւիրած են իրենց սուռները: Իսկ Մարաշցիք խոստացած են յարմարագոյն առիթի մը հանգանակութիւն բանալ որբանոցին համար:

Շնորհակալութեամբ կը յիշենք թէ ամէն որբանոց գտնուած տեղեր եղած են անհատներ որոնք իբր խնամակալութեան անդամ նիւթական ու բարոյական զսոցողութիւնով օգնած են որբանոցին:

**ՈՐԲԵՐՈՒ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ**

Յանձնաժողովիս հրահանգին համաձայն որբերու ընտրութիւնը կատարուած է մեծ խնամով և չափազանց խնայողութեամբ: Նկատի առնուած է անոնց ընտանեկան պարագաները, եթէ մայր ունին, մօր վիճակը, առողջութեւնը ևն: Հաճնոյ 1,000է աւելի որբերէն ընդունուած են միայն 350: Պաղչէի գաւառակին 1,500է աւելի որբերէն նոյնքան: Նոյնն է համեմատութիւնը և միւս յրջանակներուն:

Մայրերուն քով թողուած են 5 տարեկանէն վար և 13 տարեկանէն վեր որբերը որոնք դարձեալ անկարող են իրենք զիրենք հոգալու մինչև իսկ 18-20 տարեկան: Այս հաշուով այրիներու քով թողուած են 1-3 տարեկան որբերը և անկէ աւելիներ առնուած են: Իսկ սուրը մնացած որբերու կեանքը կախում ունի իրենց այրի մայրերէն:

Այս ախտը իրողութեան առջև Որբախնամս սա համոզման յանգած է թէ առ այժմ հնարուոր չէ մեր պատասպարեալներուն թիւը 1300է պակսեցնել, անոնց մայրերուն գործ տրուած պարագային իսկ:

## ՈՐԲԱԽՆԱՄԻՍ ՆԻՍՏԵՐԸ



Որբախնամ յանձնաժողովս իր կազմութենէն մինչև այսօր ունեցած է 66 նիստեր, որոնք տեղի ունեցած են Ղարաթիւղ Խորհրդարանը: Ամեն Գուրեան Ս. Պատրիարք հայրը, ի հարկին, նախագահած է:

Այս նիստերուն մէջ նկատի առնուած են 792 նամակներ ու հեռագրեր, որոնց խորաքանջութիւնն պատասխանուած է ժամանակին, համաձայն յանձնաժողովի սրտչումներուն որոնք տրուած են գրեթէ միշտ միաձայնութեամբ և շատ քիչ անգամ մեծամասնութեամբ:

Ներկայ տեղեկագիրը իր ամբողջութեանը մէջ կը ցոյցանէ արդէն Որբախնամիս բոլոր գործառնութիւնները: Կարեւոր կը համարինք սակայն քանի մը գլխաւոր պարագաներ յիշել. —

### Ա. — ՈՐԲԵՐԸ ՏԵՂԻՈՅՆ ՎՐՈՅ ԽՆՈՄԵԼՈՒ ՍԿՋՐՈՒՆԻՔ

Յանձնաժողովս ընդունեց իր խնամոց յանձնուած Կիլիկիան որբերը տեղւոյն վրայ խնամելու և գառախարակելու սկզբունքը, պարզապէս անոր համար որ որբերը հաս, հոն չցրուին և հետանան իրենց օճախէն:


Այս սկզբունքին համաձայն Որբախնամն մերժեց այն բոլոր առաջարկները որոնք կը համնէին իրեն ի մասին որբերու իրը հոգեզուակ որդեգրութեան և ամէն անգամ որ այսպիսի առաջարկ մը ներկայացաւ, թեկազրեց առաջարկոյն որբին մէկ կամ աւելի տարիներու պաշտպանութիւնը յանձն առնել: Ու պատահեցաւ որ շատեր ընդունեցին այս թեկազրութիւնը և գործադրեցին, և ոմանք ալ անպատասխանի թողուցին մեզ:

Որբախնամն ոչ միայն չթողուց որ իր խնամոց յանձնուած որբերը իրը հոգեզուակ դուրս հանուին Կիլիկիայէն, այլ և մերժեց, միշտ համաձայն իր սկզբունքին, առաջարկները այն անհատներուն ու մարմիններուն որոնք կը փափաքէին սրտ թուով որբեր իրենց հաշւոյն գառախարակել այս կամ այն վարժարանին մէջ:

Որբախնամն այս սկզբունքը ընդգրկելով հանդերձ մեծամասնութեամբ յանդեցաւ սա եզրակացութեան թէ կարելի պիտի ըլլայ արարականութեամբ քերականութեամբ և բացառաբար անհատներու կամ ազգ. մարմիններու խնամարկութեան որբեր յանձնել, Որբախնամիս մասնաւոր սրտչումով ու կարգապահութեամբ:

### Բ. — ԱՅՐԻՆԵՐՈՒ ՀԱՐՅՈՒ ԵՒ ԻՆՊՈՍԱՏ ԱՅՐԻՆԵՐՈՒ ԵՒ ՈՐԲԵՐՈՒ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵՆԷՆ ՆՊԱՍՏ ՈՒՉԵԼՈՒ ՊԵՏԻՐ

Որբախնամն, իրերու ընտան հետեւութեամբ, իր սեղանին վրայ ունեցաւ նաև այրիներու հարցը: Որովհետև որբերուն մեծ մասը մայր ու



ՆԱԿԱՐԻՒՄ ԵՐԱՅԻՄԱՆ ՍԿՋՐՈՒՆԻՔԻ ՆԻՍՏԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵՆԷՆԻ

նեցողներ էին, փափաքուեցաւ այս կարգի որբերը փոխանակ իրենց մօրը քովէն աւանելով որբանոցներու մէջ տեղաւորելու և պարտաւորելու անոնց մայրերը որ յուսահատութեան մէջ սոււայտին, թողուլ իրենց մօրերուն խնամքին, պայմանաւ որ այս վերջնոց հայթայթուի սպրուստի պէտք եղած միջոցը, այսինքն աշխատանք: Եւ որովհետեւ այս գործը բաւական բազմապահանջ ու թէ՛և որբախնամ գործին հետ անմիջական առնչութիւն ունեցող, բայց այլապէ՛ս կարեւոր գործ մըն էր, որ կը կարօտէր թէ՛ դրամի և թէ՛ մասնաւոր խնամքի, յանձնաժողովս արժան գատեց այս խնդիրը ներկայացնել Վարչութեան, լուրջ նկատողութեան աւանելու և ըստ այնմ պէտք եղած միջոցները խորհելու և կարեւորը գործադրելու համար: Ազգ. Կեդր. Վարչութիւնը սակայն այս պէտքին գործադրութիւնը յանձնաժողովիս յանձնեց: Ասոր վրայ էր որ, Որբախնամ անցեալ Յունուարին, որբերու և այրիներու մասին մանրամասն յիշատակագիր մը ներկայացուց Վարչութեան խնդրելով որ զիմուժ ընէ Կառավարութեան մօտ, 23000 ոսկուց տարեկան գումար մը արամագրելու Ազգ. Պատրիարքարանի, ի նպաստ այրիներու և որբերու, քանի որ Որբախնամ սուսջին օրէն այն համոզումը գոյացուց թէ միտիայն Ազգին օժանդակութեամբ կարելի չպիտի ըլլար Կիլիկիան աղէտահարները խնամելու գործը սպահովել:

Վարչութեան Սրբազան նախագահը՝ Ամեն. Դուրեան պատրիարք, կատարեց այս զիմուժը, յանուն Ազգին, և Կառավարութիւնը ընծայեց առաջին տարուան համար մէկ միլիոն դրուշ որ ի վերջոյ կէս առ կէս բաժնուեցաւ Որբախնամիս և Այրիախնամ յանձնաժողովոյ միջեւ, — մարմին որ կազմուեցաւ վերջերս Ազգ. Կեդր. Վարչութեան կողմէ, Որբախնամիս ծանրաբեռնուած վիճակը նկատի առնուելով և յարմար դատուած ըլլալով որբախնամ գործը անջատել այրիախնամէն:

**Գ.—ՈՐԲԱԽՆԱՄԻ ԴՐԱՄՆԵՐՈՒՆ ՅԱՊԱՀՈՎԻ ՊԱՀՊԱՆՈՒԹԻՒՆԸ**

Որբախնամ սուսջին օրէն լուրջ նկատողութեան առաւ Որբախնամի դրամներուն յապահովի պահպանութեան խնդիրը և որոշեց երեք հարիւր (300) լիրայէ աւելի գումարները, — մինչև 300 լիրա գանձապետին քով 4% տոկոսով մնալու պայմանով, — յանձնել ի պահ Ռուսական պանքա-կոսով: Այսպէս, ամէն անգամ որ գանձապետին քով բաւականաչափ դրամ կը պակսի, պանքային մէջ ի պահ գրուած գումարէն կ'առնուի պէտք եղածին չափ, միշտ Պատրիարքին կամ Տեղապահին, յանձնաժողովիս Ատենապետին և Գանձապետին ստորագրութեամբ:

**Գ.—ՈՐԲԱՆՈՅՆԵՐԸ ՄՕՏԷՆ ՏԵՄՆԵԼՈՒ ԵՒ ՔՆՆԵԼՈՒ ՊԷՏՔ**

Յանձնաժողովս այս տարուան ընթացքին մէջ պէտք տեսաւ իր անգամներէն միոյն միջոցաւ քննել իր մատակարարած որբանոցները և միեւնոյն ստան ուսումնասիրել այրիներու աշխատանքի հարցը: Ասիկա՝ պարզապէս մօտէն տեսնելու համար էր որբերը, որբանոցները, անոնց ի՞նչ վիճակի մէջ գտնուելը և այլն:

Որբախնամիս անգամներէն Սարգիս Սուխն էֆէնտի որ Ատանայի աղէտին վաղորդայնին իբր վարչակնն Ա. Պատուիրակ ծանօթ էր Կիլիկիոյ և հարկ եղած փորձառութիւնն ու ձեւնհասութիւնը ունէր այս քննութեան գործը յաջողութեամբ ի գլուխ հանելու, Որբախնամիս խնդրանօք սիրով ստանձնեց այս պաշտօնը և մօտ հինգ ամիս անձնուիրաբար պարտեցաւ Կիլիկիոյ այլ և այլ կողմերը, հսն ուր որբախնամի և այրիախնամի գործեր կային և վերադարձին բերաւ մեզ հետեւեալ տեղեկագիրը. —

**ՏԵՂԵԿԱԳԻՐ  
ՍԱՐԳԻՍ ՍՈՒԻՆ ԷՖԷՆՏԻ**



Ազնուաշուք  
Ասենապէս Էֆէնտի եւ պս. Անդալ  
Կիլիկիոյ Որբախնամ Կեդրոնական Յանձնաժողովոյ

Ներկայ տարուոյ Փետրուար 29ին, Որբախնամ Յանձնաժողովոյ առաջարկութեամբ և Ազգ. Կեդր. Վարչութեան որոշմամբ պաշտօն արուեստաւ ինձ որպէս Վարչական և Որբախնամի պատուիրակ այցելել Ատանայի և Հալէպի նահանգներուն հայարնակ արկածեալ վայրերը, քննելու ազգ. որբանոցներու վիճակը և պատրաստելու որբերու, այրիներու մանրամասն վիճակագրութիւնը, միեւնոյն ստան ուսումնասիրելով այդ արկածեալ տարաբաղդներուն կացութիւնը բարեփոխելու և սպահովելու միջոցները:

Այրիներու վիճակագրութիւնը և անոնց մասին ծանօթութիւնները և թեկադրանքները բոլորովին անջատ աշխատութիւն մը ըլլած ըլլալով, ներկայս մի միայն կը յատկացնեմ որբերու:

Ներկայիս կցուած է նաև, որբանոցներու, Հայ-Լուսաւորչական, Հայ-Բողոքական, Հայ-Կաթոլիկ և Սիւրեանի-Կաթոլիկ, Գատիմ ու Կիլտանի որբերու մանրամասն վիճակագրութիւնը, ուր երեւցած թիւերը իւրաքանչիւր ազգի Առաջնորդարաններէն ու հոգեւոր պետերէն ճշգրտած և ընդունուած են, և առնուած իրենց բնակավայրերէն:

Այսօր Ատանայի և Հալէպի նահանգներուն մէջ գտնուած երկուստ որրերու հաւաքական թիւն է ,

Մանչ 4296  
Աղջիկ 3910 8206

որուն մանրամասնութիւնը հետեւեալն է :

	Մանչ		Աղջիկ		Գումար	
Հայ Լուսաւորչ. որբեր	2540		2188		4728	
Նահանգ Ատանայի	500	3040	474	2662	974	5702
» Հալէպի						
Հայ Բողոքական որբեր	177		208		385	
Նահանգ Ատանայի	315	492	271	479	586	971
» Հալէպի						
Հայ Կաթողիկ որբեր	70		75		145	
Նահանգ Ատանայի	40	110	35	110	75	220
» Հալէպի						
Արեւեկ առջի Հայ որբերը	221		216		437	
Նահանգ Ատանայի	332	553	320	536	652	1089
» Հալէպի						
* Ասորի կաթողիկ որբեր	11	11	15	15	26	26
* Ասորի Գաթիմ	70	70	81	81	151	151
* Քիլասնի որբեր	20	20	27	27	47	47
	4296		3910		8206	

Այս որբերը երկու գասակարգի կը բաժնուին


Ա. — Ի հօրէ ի մօրէ որբ

Բ. — Միայն ի հօրէ որբ , որոնք մանրամասնուած են հետեւեալ ցուցակին մէջ :


	Ի հօրէ ի մօրէ որբ			Միայն ի հօրէ որբ		
	Մանչ	Աղջիկ	Գումար	Մանչ	Աղջիկ	Գումար
Հայ Լուսաւորչական . . . . .	62	53	115	2978	2609	5702
» Բողոքական . . . . .	—	—	—	492	479	971
» Կաթողիկ . . . . .	5	8	13	105	102	220
	67	61	128	3575	3190	6893
Ասորի Կաթողիկ . . . . .	—	—	—	11	15	26
» Գաթիմ . . . . .	10	12	22	60	69	151
Քիլասնի . . . . .	—	1	1	20	26	47
	77	74	151	3666	3300	7117
Նախ քան աղէտը որբացածներէն	—	—	—	553	536	1089
	77	74	151	4219	3836	8206

Այս որբերէն մաս մը որբանոցներու մէջ են , իսկ մաս մ'ալ մօրերնուն քով :

(\*) Ասորի և Քիլասնի որբերը միայն Ատանա քաղաքը կը գտնուին :



ՀԱՆՆԱԾ ԵՐԵՎԱՆԻ ՓՈՒԳՐԻՆՆ ԵՐԵՎԱՆԻ



ՀԱՃՆՈՅ ՈՐԲԱՆՆԵՐԻՆ ՈՐԲԱՆՆԵՐԸ

Կիլիկեան որբերը պատասարող հաստատութիւն ք 4 կարգի կը բաժնուին :  
 Ա. — Կիլիկիոյ Որբախնամ Կեդր. Յանձնաժողովոյ որբանոցներ :  
 Բ. — Օսմանեան Պետական որբանոցներ :  
 Գ. — Անգլ. Ամերիկ. Գերմ. Ժիզուէիթ, Լատին որբանոցներ :  
 Դ. — Անհատական և այլ կրթական հաստատութիւններ :  
 Որբախնամ Կեդրոնական Յանձնաժողովոյ մատակարարած որբանոց-  
 ները այժմ թուով վեց են. չորսը Ատանայի նահանգին, իսկ երկուքը  
 Հալէպի նահանգին մէջ, ուր կը պատասարուին ընդամէնը .


Մանչ 817  
 Աղջիկ 609 1426 որբեր

Ս. Տ. Ս. Ն. Ս. Ս. Ն. Ս. Ն. Ս. Ն. Ս.

	Մանչ	Աղջիկ	Գումար
1 Օգոստ. 1909. Վարչական Բ. պատուիրակութիւնին	146	87	233
2. Հաճընի » »	192	158	350
3. Տէօղթեօի » »	152	121	273
4. Հասանալէյի » »	120	87	207
	610	453	1063

Հ. Ա. Լ. Գ. Ի. Ն. Ս. Ն. Ս. Ն. Ս.

5. Մարաշի որբանոց	105	73	178
6. Այնթապի » »	102	83	185
	817	609	1426



ՀԱՃՐՆԻ ՈՐԲԱՆՈՅԻՆ ՈՐԲԱՆՆԵՐՈՒՆ ՄԻՈՑՆ ՕՐ. ՄԱՐԹԵԱ ՅՈՒՆԻՎԵՐՍԻՏԵՏԻՆ ԱՐԽԱՆՈՒԹԵՒՆԸ

Այս որբանոցներէն զատ կար նաև Կլիկեան անդրանիկ ազգ. որբանոցը, Մէրսին հիմնուած, վարչական Ա. պատուիրակութեան կողմէ աղէտին անմիջապէս յաջորդող շրջանին մէջ. Մէրսինը՝ այն ատեն նկատուելով էն յարմարագոյն վայրը որբերը հաւաքելու որպէս ոչ արկածեալ, ծովեզերեայ և հայաչատ քաղաք, թէև կլիման ո՛չ այնչափ նպաստաւոր մանաւանդ ամառները:

Սակայն միւս որբանոցները հիմնուելէ ետքը, Որբանոցամ Կեդր. Յանձնաժողովը, նկատի ունենալով որ բնիկ Մէրսինցի որբեր չկան և թէ կլիման ալ լաւ չէ, որոշեց փակել Մէրսինի որբանոցը և որբերը փոխադրել իրենց ծննդավայրերուն մօտը գտնուող որբանոցները: Այս որոշումը դործադրուեցաւ պատուիրակութեան Մէրսին հասնելէ: անմիջապէս ետք: Այսպէսով առանց պատասպարեալ որբերու քանակը՝ պակսելու որբանոցներու թիւը 7էն 6ի իջաւ:

Մէրսինի որբանոցին փոխադրութեանը ատեն, Ատանայի որբանոցի չէնքին անբաւականութեանը պատճառաւ, դժուարութիւն մը ծագեցաւ տեղաւորելու որբերը, որոնց մեծ մասը Ատանայէն և շրջականներէն էին. պատուիրակութիւնը այն ատեն յարմար տեսաւ հետեւեալ կարգադրութիւնը ընել: Այսինքն՝ այն որբերը որոնք Ատանացի էին կամ մայրերնին Ատանա էր, յանձնել իրենց մօտը, Որբանոցէն հոգարով անոնց սնունդը, զգեստեղէններն ու այլ պէտքերը: Այս կարգադրութեամբ 100է աւելի երկսեռ որբեր մօրերնուն դարձուեցան, ինչ որ միտիթարութիւն մը եղաւ մայրերուն, և ուրախութիւն որբերուն, ապահովուած իրենց ամէն պէտքերը:

Որբանոցներու վիճակի մասին քննութեանցս արդիւնքը և տեսութիւններս ներկայացնելէ առաջ հարկ կը տեսնեմ քանի մը խօսքով պարզել այն բարերար արդիւնաւորութիւններն զորս ունեցած են այս հաստատութիւնները:

Որբերը պատասպարուելով և իրենց համարիւններուն ինամքին ենթարկուելով, ոչ միայն աղտոտած են աննախանձելի վիճակէ մը, խեղճութենէ, այլ ֆիզիքական և բարոյական ստոյգ ապականութենէ կամ մահէ ալ փրկուած են, որուն անխուսափելիօրէն ենթարկուած էին աղէտին յաջորդող շրջանին մէջ, ընտանեզուրկ, ծնողակորոյս այս հէգ արարածները, անօթի, մերկ, և մուրացիկ վիճակի մէջ ըլլալով:

Որբանոցներու բացումը արկածեալ ժողովրդեան յուսահատ և հոգեկան աննախանձելի դրութեան վրայ ալ միտիթարական ձեռնարկ մը եղած է: Ժողովուրդը, մանաւանդ մայրերը տեսնելով որ որբերը կը հանգըստանան և վիճակնին կ'ապահովուի և իրենք ալ ծանր ու ճնշող բռնէ մը կ'ազատին, իսկապէս միտիթարուած են և վիճակնին իրենց համար մասամբ մը տանելի դարձած է:

Դժբաղդաբար Որբանոցամի միջոցները չէին ներած աւելին ընելու այս առաջի շրջանին որ արդէն իր նիւթական միջոցներուն ներածէն ալ աւելի թիւով որբեր իր ինամքին տակ առած էր: Այժմ Կլիկեան որբերուն

Կէսէն աւելին կը մնան մօրերնուն քով, մեծադոյն մասամբ արգահատելի դրուժեան մը մէջ, ինչպէս մայրերնին:


Որբանոցներու մէջ կան	Մանչ	1795		
	Աղջիկ	1572	3367	
Մօրերնուն քով կը մնան	Մանչ	2501		
	Աղջիկ	2338	4839	8206

Ինչպէս մանրամասնաբար կը տեսնուի հետեւեալ ցուցակին մէջ .—


Որբանոցները		Մօրերնուն քով		Ընդհ. Գումար	
Մանչ	Աղջիկ	Մանչ	Աղջիկ		
<b>Հայ Լուսաւորչական</b>					
Նահանգ Ատանայի	791	619	1749	1569	4728
» Հայէսլի	196	177	304	297	974
	987	796	2053	1866	5702
<b>Հայ Բողոքական</b>					
Նահանգ Ատանայի	33	39	144	169	385
» Հայէսլի	210	190	105	81	586
	1230	1025	2302	2116	6673
<b>Հայ Կաթոլիկ</b>					
Նահանգ Ատանայի	12	11	58	64	145
» Հայէսլի	—	—	40	35	75
	1242	1036	2400	2215	6893
<b>Նախ քան աղէքս որբացածներ</b>					
	553	536	—	—	1089
	1795	1572	2400	2215	7982
<b>Ասորի կաթոլիկ</b>					
	—	—	11	15	26
<b>Ասորի Գասիմ</b>					
	—	—	70	81	151
<b>Քիլսանի</b>					
	—	—	20	27	47
	1795	1572	2501	2338	8206

Որբանոցներու մէջ խնամուող 3367 որբերէն 142<sup>ր</sup>ը կը դառնուին մեր որբանոցներուն մէջ, իսկ մնացեալ

Մանչ 978  
 Աղջիկ 963 1941<sup>ը</sup> պատասպարուած են հետեւեալ որբանոցներու մէջ .—



ՄԱՆՉՆԵՐԻՆ ԵՐԵՎԱՆԻ ՄԱՐԿԱՆՆԵՐ



ԱՎՋԱՍՆԱՅ ՈՐՐԱՆՈՅ ՄԱՐԱԵՐԻ

	Որբանոց			
Հաճընի Պետական	»	75	40	115
Տէօրթեօլի	»	75	26	101
Այնթապի Անգլիական	»	100	—	100
» Ֆրերսըն	»	28	117	145
Մարաշի Գերմանական	»	400	327	727
» Անգլիական	»	80	120	200
Հաճընի Ամերիկական	»	140	210	350
Ատանայի Կաթողիկ	»	4	3	7
» Ժիզուլիթ	»	—	1	1
» Բողոքական	»	6	18	24
Պէյրուժի Գերմանական	»	2	2	4
Ուրֆայի	»	4	7	11
Իզմիրի	»	5	32	37
Թալասի	»	11	3	14
Հայէսլի Կաթողիկ	»	—	24	24
Բէթլէհէմի Ժիզուլիթ	»	2	—	2
Պրուսայի Պաղատասարեան	»	3	4	7
Իպրոցասէր Տիկինանց Պոլիս	»	—	25	25
Տիկինանց Միութեան	»	3	4	7
Երուսաղէմի Ժառանգաւորաց	»	15	—	15
Ռոտտիթօ	»	25	—	25

Մանչ	Աղջիկ	Գումար
75	40	115
75	26	101
100	—	100
28	117	145
400	327	727
80	120	200
140	210	350
4	3	7
—	1	1
6	18	24
2	2	4
4	7	11
5	32	37
11	3	14
—	24	24
2	—	2
3	4	7
—	25	25
3	4	7
15	—	15
25	—	25
978	963	1941

Արդ կ'ամփոփուի սապէս .—

Կիլիկեան Որբանոցները

Մանչ	817	
Աղջիկ	609	1426

Այլևայլ Հաստատութեանց մէջ

Մանչ	978	
Աղջիկ	963	1941
		3367

Վարչական պատուիրակութեանց և Կիլիկիոյ Որբանոցներու Կեդր. Յանձնաժողովոյ կողմէ հիմնուած որբանոցներու ղրութեան գալով .—

Որբանոց Ասանայի .— Այս որբանոցի համար որ Վարչական Բ. պատուիրակութեան կողմէ բացուած էր, կուսակալութիւնը իւրաքանչիւր որբի օրական 50 փրց. (5 մէթալիկ) նպաստ մը կը վճարէր: Վերջին պատուիրակութեան և Կիլիկիոյ Շնորհագարդ Հայրապետին ղիմումներուն ու թաղերիներուն վրայ կուսակալութիւնը խոստացած է նպաստը շարունակել և միեւնոյն ատեն Որբանոցին վարչական, մատակարարական և կրթական գործերուն մասին ամէն ղիւրութիւն ընծայել:

Որբանոցը աննախանձելի կացութեան մը մէջ էր: 140 երկսեռ որբերու համար, հազիւ 70ի բաւելու չափ անկողին, զրեւտեղէն, սպաս սեղանի և այլ պէտքեր կար: Իսկ աւելին՝ ժառանգական և ստացական տարափոխիկ հիւանդութիւններէ տառապող որբեր խառն կը պահուէին ոչ հիւանդներու հետ, այնպէս որ հիւանդութիւնները սկսած էին տարած-


ուիլ արագօրէն: Պատուիրակութեան առաջին գործը եղաւ 5-6 սենեակով զատ տուն մը վարձել, որովհետեւ Որբանոցին մէջ տեղ չըլլալուն կարելի չէր նոյն շէնքին մէջ չեղօքացնել, հետեւաբար հիւանդները փոխադրուեցան նոր տան մէջ և յատկացուեցան հիւանդապահներ և սոսականաւոր բժիշկ մ'ալ՝ ամէն օր այցելելու և դարմանելու համար:

Յետոյ՝ Ա. Վարչական պատուիրակութեան կողմէ Մէրսինի Որբանոցը բացուած ատեն 500 որբերու համար պատրաստուած էր անկողին, հազնելիք, սեղանի սպաս կայն: Այս գոյքերէն 300է աւելի որբերու բաւելու չափ մաս մը կը մնար Մէրսին, նախապէս հաւաքուած 450 որբերէն մեծագոյն մասին ցրուած ըլլալուն պատճառաւ: Վերոյիշեալ գոյքերը Ատանա փոխադրուելով, ամբողջացան որբանոցի պէտքերը, ինչպէս նաև մօրերնուն քով խնամուելիք որբերունը: Աւելցածներն ալ հետզհետէ զրկուեցան Տէօրթեօլի և Հաճընի որբանոցները, ինչպէս նաև Իզմիրէն որպէս նուէր հաւաքուած 45 նոր վերմակները:

Գալով միւս որբանոցներուն, թէ ասոնցմէ իւրաքանչիւրին մէջ որչափ երկսեւ որբեր կան և քանի՞ հոգիէ կը բաղկանայ պաշտօնէութիւնը և ի՞նչ ամասականներով, ուրոյն ցուցակներով ժամանակին Յանձնաժողովիչ ներկայացուցած ըլլալով, այստեղ միայն կը պարզեմ որբանոցներու ընդհանուր վիճակին վրայ ամփոփ տեսութիւններս:

Որբերու առողջական վիճակը. — Պատուիրակութեան այցելութեան միջոցին, կատարուած բժշկական քննութենէն տեսնուեցաւ որ, ամբողջ որբերուն վրայ միջին հաշուով 30 յօր տկար է, հետեւեալ հիւանդութիւններով. — աղայոց մէջ տեսնուած են դաղիական ախտէ վարակեալներ ժառանգականութեամբ, յետոյ նախ քան որբանոցը մտնելին իրենց ունեցած աղտոտ վիճակին բերուածով բորոտածներ և (քէլ)եր կայն: Ասոնցմէ զատ տեղական հիւանդութիւններէն եղող ջերմ, աչքի թրաքօմա հիւանդութիւնը, փորձարութիւն ունեցողներ: Սակայն չտրհիւ տարուած բժշկական խնամքներու, մտուղի կանոնաւորման, տարափոխիկ հիւանդութիւն ունեցողներուն չեղօքացման, հետզհետէ պակսելու վրայ էին այս հիւանդութիւնները:

